ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ք.Երևան, Գ. Նժդեհի 23, հեռ. +(37410) 44-71-13/216/

Գործ N ՎԴ-10973/05/13
ԴԴ-9-Ե- 111407

29.11.2013թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» ՀԿ-ին
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տ. Մեծի 59

Սույն գրությամբ ուղարկվում է «Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին» ՀՀ վարչական դատարանի 2013 թվականի նոյեմբերի 27-ի որոշումը:

Առդիր՝ որոշումը 4 թերթից, հայցադիմումի պատճենը՝ կից փաստաթղթերով 28 էջից:

Դատավոր Կարեն Ավետիսյան

ՎԴ-10973/05/13
2013թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27.11.2013թ. ք. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Կարեն Ավետիսյանի, քննարկելով «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ պահանջելով. «Ճանաչել ոչ իրավաչափ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2013թ. սեպտեմբերի 3-ի Մաքսային միությանը միանալուն ուղղված գործողությունները (անգործությունը)»:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժել, հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն դեպքում հայցվորը հայցադիմումով, ըստ էության, նշում է, որ 2010 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես որդեգրել է Եվրոպական Միության արևելյան գործընկերության շրջանակներում ասոցացման պայմանագրի ստորագրմանն ուղղված արտաքին քաղաքականություն, սակայն 2013 թվականի սեպտեմբերի 03-ին Հայաստանի Հանրապետության Նախագահն անսպասելորեն արել է հայտարարություն Մաքսային Միությանը միանալու վերաբերյալ:

Հայցվորը, մասնավորապես, գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի տվյալ գործողությունները զուրկ են եղել հրապարակայնությունից և թափանցիկությունից, որպիսի պարագայում խախտվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված սկզբունքը:

Նկատի ունենալով, որ սույն դեպքում վիճարկվում է արտաքին քաղաքականության բնագավառում Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից իրականացված գործունեությունը՝ դատարանի համոզմամբ նախ անհրաժեշտ է բացահայտել Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերություններում Հանրապետության Նախագահի դերը և լիազորությունները:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 7-րդ կետն ամրագրում է. Հանրապետության Նախագահի ներկայացուցչական գործառույթը՝ լիազորելով վերջինիս ներկայացնել Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնել արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքել միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնել միջազգային պայմանագրեր և ստորագրել դրանց վավերագրերը, հաստատել, կասեցնել կամ չեղյալ հայտարարել վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը: Նշված լիազորությունները պայմանավորված են պետության գլխի առանձնահատուկ սահմանադրաիրավական կարգավիճակով և Հանրապետության Նախագահին օժտում են միջազգային հարաբերություններում պետության մարմնավորման կարևորագույն գործառույթով, որը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետությանը միջազգային հանրության առջև հանդես գալ որպես միջազգային իրավունքի մեկ միասնական սուբյեկտ: Միջազգային հարաբերություններում պետության ներկայացուցչության լիազորությունը թույլ է տալիս Հանրապետության Նախագահին՝ որպես Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող ինքնիշխան կարգավիճակով և համապատասխան առանձնաշնորհով օժտված պաշտոնատար անձի, Հայաստանի Հանրապետությանը ներկայացնել միջազգային հարթության վրա ի պաշտոնե՝ առանց լիազորությունների հատուկ հաստատման:

Հանրապետության Նախագահի նշված գործառույթն ամբողջականացվում և լրացվում է պետության արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարման լիազորությամբ, որը շնորհում է նրան արտաքին քաղաքականության մշակման բարձրագույն մարմնի հատուկ կարգավիճակ: Դա ենթադրում է ինչպես Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության բնագավառում գործող պետական մարմինների գործունեության ընդհանուր վերահսկողության իրականացում, այնպես էլ՝ անմիջական լիազորությունների գործադրում: Վերջինը դրսևորվում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական ուղեգծի նպատակների և խնդիրների որոշման, այդ նպատակների և խնդիրների անմիջական իրագործման, ինչպես նաև արտաքին քաղաքականության իրականացման իրավասությամբ օժտված գործադիր իշխանության մարմինների լիազորությունների սահմանման և նրանց գործունեության անմիջական ղեկավարման և վերահսկման իրավասության առկայությամբ:

Միջազգային հարաբերություններում ներկայացուցչական և պետության արտաքին քաղաքականության ղեկավարման լիազորությունների հաջորդական շարունակականությունն ապահովում է միջազգային պայմանագրեր կնքելու Հանրապետության Նախագահի իրավունքը, որը ենթադրում է նաև նման պայմանագրերի շուրջ բանակցություններ վարելու Նախագահի լրացուցիչ հնարավորությունը: Այն բխում է պետության գլխի իրավական առանձնաշնորհից և հանդիսանում է նրա սահմանադրական և միջազգային իրավական կարգավիճակի էական տարրերից մեկը: Առանց հատուկ լիազորությունների՝ բանակցություններին մասնակցելու և միջազգային պայմանագրեր կնքելու պետության գլխի իրավունքը ճանաչված է թե՛ միջազգային իրավունքի սովորութային նորմերով, թե՛ այդ ոլորտի ամենահեղինակավոր փաստաթղթերով, մասնավորապես, Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայով (7-րդ հոդվածի 2-րդ մաս), «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով (16-րդ հոդվածի 1-ին մաս):

Փաստորեն, միջազգային պայմանագիր կնքելու և դրա շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի հնարավորությունը հանդիսանում է վերջինիս բացառիկ լիազորությունը, որը բխում է նրա՝ որպես պետության գլխի, հատուկ կարգավիճակից և ապահովում է պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման գործառույթի արդյունավետ իրականացումը:

Միաժամանակ, իշխանությունների տարանջատման և հավասարակշռման համատեքստում միջազգային պայմանագրեր կնքելու Հանրապետության Նախագահի լիազորությունը ենթարկվում է զսպման և հակակշռման ինչպես օրենսդիր, այնպես էլ՝ դատական իշխանության կողմից:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի նույն 7-րդ մասը նախատեսում է միջազգային պայմանագրերն Ազգային ժողովի վավերացմանը ներկայացնելու Նախագահի լիազորությունը, որն իր բնույթով նաև պարտավորություն է: Այն մասնավորեցված է «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 22-24-րդ

հոդվածներում, որոնք վավերացման ենթակա որոշակի պայմանագրերը Հայաստանի Հանրապետության համար պարտադիր ուժ ստանալու համար նախատեսում են Ազգային ժողովի կողմից վավերացում: Ընդ որում, օրենսդիրը պարտադիր վավերացման ենթակա է որակում այնպիսի հիմնարար հարցերի առնչությամբ միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին, Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորությունների ստանձնմանը, որի կիրառումը նախատեսում է օրենքների փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ սահմանում է օրենքներին հակասող նորմեր և այլն: Այսինքն, Հանրապետության համար առանցքային հարցերի շուրջ միջազգային պայմանագրերի կնքման Նախագահի լիազորությունը ենթարկվում է օրենսդիր մարմնի յուրատեսակ հակակշռմանը:

Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետին և «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային պայմանագրերը նախապես ներկայացվում են ՀՀ սահմանադրական դատարան, որը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Նշվածն, իր հերթին, հանդես է գալիս որպես դատական իշխանության կողմից Հանրապետության Նախագահի՝ միջազգային պայմանագիր կնքելու լիազորության նկատմամբ զսպման և հակակշռման կառուցակարգ:

Վերոգրյալից հետևում է, որ միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի լիազորությունը բնորոշ է պետության գլխի ներկայացուցչական դերին և հանդիսանում է նրա հատուկ լիազորությունը: Նշվածով հանդերձ, այն ամբողջությամբ համահունչ է իշխանությունների տարանջատման սկզբունքին, քանի որ ենթարկվում է փոխզսպումների և հակակշիռների համակարգին՝ դառնալով օրենսդիր և դատական իշխանության յուրահատուկ վերահսկողության առարկա:

Նման պայմաններում պարզ է դառնում, որ Հանրապետության Նախագահի նշված լիազորությունների իրականացման ընթացքում ձեռնարկված գործողությունները դուրս են վարչադատական վերահսկողության շրջանակներից, քանի որ դրանք, ինչպես նշվեց վերը, դատական վերահսկողության են ենթարկվում հատուկ ընթացակարգով՝ սահմանադրական արդարադատության սահմաններում: Ընդ որում, հարկ է նկատել, որ վարչական արդարադատությունը (ի տարբերություն սահմանադրական արդարադատության) օժտված է բացառապես կոնկրետ վերահսկողության լիազորությունով և չի իրականացնում վերացական վերահսկողության գործառույթ: Այսինքն, որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի գործունեությունը կարող է ենթարկվել վարչադատական վերահսկողության միայն այն պարագայում, եթե այն միջամտում է մարդու սուբյեկտի վ իրավունքներին և ազատություններին: Նշված հայեցակարգը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-19-րդ հոդվածներին համահունչ ընդունված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածից: Իսկ Հանրապետության Նախագահի՝ միջազգային պայմանագրեր կնքելու լիազորությունը ոչ թե կրում է մարդկանց հանրային սուբյեկտիվ իրավունքների կոնկրետ կարգավորմանն ուղղված վարչական բնույթ, այլ հանդիսանում է պետության արտաքին քաղաքականության մշակման և ղեկավարման վերացական գործառույթ:

Այսպիսով, միջազգային պայմանագրեր կնքելու և դրանց շուրջ բանակցություններ վարելու Հանրապետության Նախագահի լիազորության իրագործման միջոցով պետության արտաքին քաղաքականության ղեկավարման գործառույթը և դրանից բխող առանձին գործողությունները ենթակա չեն վարչադատական վերահսկողության, դրանք ենթարկվում են զսպման և հակակշռման ուրույն կառուցակարգերով:

Ամբողջ վերը նշված վերլուծության և եզրահանգման հիման վրա դատարանը փաստում է, որ ներկայացված հայցը, որով վիճարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի գործողությունները, ենթակա չէ դատարանում քննության: Հետևապես դատարանը գտնում է, որ հայցադիմումի ընդունումը պետք է մերժել, քանի որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ վարչական դատարանում քննության:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ, 117.2-րդ, 125-րդ հոդվածներով՝ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության հայցադիմումի ընդունումը մերժել:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և կարող է բողոքարկվել վերաքննության կարգով ՀՀ վերաքննիչ վարչական դատարան՝ այն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ ԿԱՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ